Հայաստանի Համայնքների Միություն

ՀՀ տարածքային կառավարման նախարարություն

«ԼԱՎԱԳՈՒՅՆ ՀԱՄԱՅՆՔ 2014» ՄՐՑԱՆԱԿԱԲԱՇԽՈՒԹՅՈՒՆ

27-ը օգոստոսի, 2014թ,
Երևան, Հայաստան

ՀԱՅՏ ՆԵՐԿԱՅԱՑՆԵԼՈՒ ՀՐԱՎԵՐ

«Հայաստանի համայնքների միությունը» և ՀՀ տարածքային կառավարման նախարարությունը հայտարարում են հերթական «Լավագույն համայնք 2014» մրցանակաբաշխության մասին:

2014 թվականի համար նախատեսված են հետևյալ անվանակարգերը.

Անվանակարգեր 2014 թվականի համար

«Լավագույն համայնք 2014» անվանակարգ

«Լավագույն քաղաքային համայնք 2014»
«Լավագույն գյուղական համայնք 2014»

«Մաքուր համայնք 2014» անվանակարգ

«Մաքուր համայնք 2014» (1-ին և 2-րդ մրցանակ)

«Կանաչապատ համայնք 2014» անվանակարգ

«Լավագույն կանաչապատ համայնք 2014» (1-ին և 2-րդ մրցանակ)

«Մշակութային լավագույն համայնք 2014» անվանակարգ

«Մշակութային լավագույն քաղաքային համայնք 2014»
«Մշակութային լավագույն գյուղական համայնք 2014»

«Համայնքային լավագույն կայք 2014» անվանակարգ

«Համայնքային լավագույն կայք 2014» (քաղաքային)
«Համայնքային լավագույն կայք 2014» (գյուղական)

«Համայնքային կյանքի լավագույն լուսաբանում» անվանակարգ ԶԼՄ-ների համար

«Համայնքային կյանքի լավագույն լուսաբանում 2014» (1-ին և 2-րդ մրցանակ)

Հայաստանի Համայնքների Միություն

ՀՀ տարածքային կառավարման նախարարություն

«Լավագույն քաղաքացիական նախաձեռնություն» անվանակարգ համայնքային և մարզային ոչ-պետական կազմակերպությունների համար

«Լավագույն քաղաքացիական նախաձեռնություն 2014» (1-ին և 2-րդ մրցանակ)

«Հայաստանի համայնքների միության» և ՀՀ տարածքային կառավարման նախարարության կողմից համատեղ անցկացվող «Տարվա լավագույն համայնք» մրցանակաբաշխությունն ամենամյա է, ավանդական բնույթ ունի և կազմակերպվում է սկսած 2006 թվականից:

Մրցանակաբշխության արդյունքում կընտրվեն 2014թ. լավագույն գյուղական և քաղաքային մեկական համայնք, ինչպես նաև հաղթողներ հայտարարված վերը նշված անվանակարգերով:

Մրցանակաբաշխությանը ներկայացվող համայնքների թեկնածություն կարող են առաջադրել համայնքները (ինքնառաջադրում), մարզպետարանները, այլ պետական մարմիններ, պաշտոնատար անձինք, հասարակական կազմակերպությունները եւ այլն:

Հավակնորդ համայնքի թեկնածությունն առաջադրելու համար անհրաժեշտ է «Հայաստանի համայնքների միությանը» կամ ՀՀ տարածքային կառավարման նախարարության աշխատակազմին ներկայացնել համապատասխան հայտը:
Հայտի ձևերը համայնքներին կուղարկվեն էլեկտրոնային փոստով մինչև սեպտեմբերի 6-ը:

Ժամանակացույց

Մինչև հոկտեմբերի 6-ը ժամը 18.00-ն՝	Հայտերի ներկայացման վերջնաժամկետ
Հոկտեմբերի 6-10-ը՝	Գնահատող հանձնաժողովի ձևավորում
Հոկտեմբերի 10-18-ը՝	Գնահատող հանձախմբի կողմից կարճ ցուցակի ձևավորում հանձնաժողովի անդամների կողմից անհատական գնահատման թերթիկների հիման վրա (յուրաքանչյուր անվանակարգում առավելագույնը 3-5 թեկնածու)
Հոկտեմբերի 19-ից առ նոյեմբերի 6-ը՝	Կարճ ցուցակի թեկնածուների կողմից գնահատող հանձնաժողովին լրացուցիչ պարզաբանումների ներկայացում, տվյալների ճշգրտության ստուգում, այցեր թեկնածու համայնքներ, թեկնածուների կողմից 3-րոպեանոց վիդեոպրեզենտացիայի պատրաստում:
Նոյեմբերի 6-8-ը՝	Ըստ անվանակարգերի հաղթողների ընտրություն
Նոյեմբեր 10՝	Պարգևատրման արարողություն

Առաջադրումներն ու կից տրվող նյութերը պետք է ներկայացվեն էլեկտրոնային փոստով (best@caa.am) կամ փակ ծրարներով (կցելով հայտը էլեկտրոնային կրիչով):

Հայտերը կգնահատվեն եւ մրցանակակիրները կորոշվեն «Հայաստանի համայնքների միության» վարչության անդամներից (որոնք առաջադրված չեն որպես թեկնածու), ՀՀ տարածքային կառավարման նախարարության ներկայացուցչներից և խորհրդակցական ձայնի իրավունքով հրավիրված փորձագետներից կազմված մրցանակաբաշխության հանձնաժողովի կողմից:

Հայաստանի Համայնքների Միություն

ՀՀ տարածքային կառավարման նախարարություն

Գնահատող հանձնաժողով (15 անդամ)

- Գնահատող հանձնաժողովը կազմված է Միության խորհրդի 12 անդամից (Յուրաքանչյուր մարզից 1 ներկայացուցիչ, գործադիր տնօրեն, նախագահ)
- Տարածքային կառավարման նախարարության 3 ներկայացուցիչներից
- Խորհրդակցական ձայնի իրավունքով կարող են ներգրավվել նաև փորձագետներ

Հավակնորդների առաջարկման վերջնաժամկետը 2014թ. հոկտեմբերի 6-ն է (ներառյալ):
ՈՒՇԱԴՐՈՒԹՅՈՒՆ: Վերջնաժամկետից ուշ ստացված դիմումները չեն ընդունվում:

Մրցանակների հանձնման արարողությունը տեղի կունենա 2014թ. նոյեմբեր 10-ին:

0025, Երևան, Հայաստան
Չարենցի 1, 2-րդ հարկ
Հեռ.՝ +374 10 57 45 01, Ֆաքս՝ +374 10 57 52 19
e-mail: info@caa.am ,
www.caa.am